Հաստատում եմ
«Գյումրու [illegible] դպրոց»
տնօրեն՝ Ռ. [illegible]

# Նախագծային աշխատանք

Նախագծի ղեկավար՝ Աննա Մանուկյան

**Թեմա՝**

*Գրել առարկայական ծրագրի թեման, որի շրջանակում իրականացվելու է նախագիծը։*

<u>Աշխարհագրություն</u>- ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ։ ԵՐԿՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ։ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<u>Պատմություն</u> – ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԲՆՕՐՐԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԸ։ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ։ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՎԱՂ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ք Ծ Ա III-I ՀԱԶԱՐԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

| | |
|---|---|
| Նախագծի անվանում՝ | «Շիրակի երկրաբանական ժառանգության հետաքննություն» աշխարհագրության և պատմության հետքերով։ |
| Առարկա(ներ)՝ | Աշխարհագրություն, պատմություն |
| Ուսումնական տարի, կիսամյակ՝ | Առաջին |
| Դասարան՝ | 7 |
| Տևողություն՝ | 6 շաբաթ (11ժամ) |
| Նախագծի իրականացման փուլեր | Կարճաժամկետ |
| Վերջնաժամկետ՝ | 01.12.2023 |
| Տեսակը՝ | ☐ներառարկայական  <u>X միջառարկայական</u><br>☐վերառարկայական |
| Չնաչափը՝ | X <u>տեսական</u>  <u>X գործնական</u><br>☐անհատական  X <u>թիմային</u><br>☐ընթացիկ  ☐ամփոփիչ |

**Նախագծի նպատակը՝**

Թվարկել, թե որն է ներկայացվող նախագծի նպատակը:

1.Զարգացնել 21-րդ դարի հմտություններ՝
Ա. քննադատական մտածողությունը,
Բ. հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:

2.Վերլուծել պատմական գործընթացներում մարդու և շրջակա միջավայրի փոխազդեցությունը:
3. Գործել որպես պատասխանատու քաղաքացի:
4. Երկրոլորտների հիմնական բաղադրիչների, դրանց փոխպայմանավորվածության, զարգացման և տարածքային օրինաչափությունների մասին համակարգված գիտելիքների ձեռքբերումը:

## Նախագծի վերջնարդյունքները՝

Ներկայացնել նախագծի վերջնարդյունքները, որոնք բխում են առարկայական ծրագրից և ՀՊՉ-ից:
*ՀՊՉ*

*Հ 10* ներկայացնի գիտության նվաճումների՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների կիրառության հավանական ազդեցությունը բնության, մարդու և հասարակության վրա.

*Հ15* նկարագրի տարբեր ժամանակաշրջանների բնական միջավայրի, հասարակական, տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների, հայոց և համաշխարհային պատմության իրադարձությունների փոխկապակցվածությունը

*Հ26* ցուցաբերի իր գործունեությունը պլանավորելու և ժամանակն արդյունավետ տնօրինելու կարողություններ

*Հ 27* բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ.

*Հ 29* ստանա, վերլուծի, գնահատի և ներկայացնի անհրաժեշտ տվյալներ, առաջարկի վարկածներ.

*Հ 30* գտնի և օգտագործի տեղեկույթ տարբեր աղբյուրներից, որոշի և բնութագրի աղբյուրի արժանահավատությունը և այն օգտագործելիս կատարի հղումներ.

*Հ 42* դրսևորի մշակութային ընկալման և արժևորման կարողություններ, արվեստի որոշ տեսակներում ստեղծագործական աշխատանքներ կատարելու ունակություններ և հմտություններ

*Հ 45* ճանաչի և արժևորի իր ազգային մշակույթը, նյութական և ոչ նյութական ժառանգությունը, դրա առանձնահատկությունները և ներդրումը համաշխարհային մշակույթի մեջ.

*ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ*
Վերջնարդյունք
Ընդհանուր գծերով բնորոշել երկրաբանական տարբեր դարաշրջաններում երկրագնդի զարգացման գլխավոր գործընթացները և տեղայնացնել:

*ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*
ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ
Հետազոտի իրենց տարածաշրջանում գտվող պատմաաշխարհագրական որևէ տեղանք կամ Ք.ծ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձան, փորձի կապեր գտնել ներկա իրողությունների հետ:

## Նախագծի նկարագիրը

Մանրամասն շարադրել, թե ինչ նախագիծ են իրականացնելու աշակերտները, այսինքն՝ տալ առաջադրանքի նկարագիրը:

Սովորողներին տրամադրվում է ծրագրային թեմաներից դուրս բերված հիմնախնդիրների ցանկը: Առաջարկվում է ընտրել դրանցից մեկը: Խմբում կատարում ենք աշխատանքի բաժանում, ըստ նախատեսված առաջադրանքների:

1. Աշխատանք տեղեկատվական աղբյուրների հետ
2. Հիմնախնդրի կարևորության և արդիականության ուսումնասիրություն և հիմնավորում
3. Կատարված աշխատանքների միջանկյալ քննարկումներ, ուղղորդում:
4. Հարցումներ, հարցազրույցների վարում, ձայնագրություններ, նկարներ:
5. Ստացված տեղեկատվության ամփոփում, վերլուծություն, պատկերների ստեղծում:
6. Միջանկյալ քննարկումներ, արդյունքների ներկայացում:

Վերջնարդյունք՝

- մակետի
- վիրտուալ թանգարանի ստեղծում
- վեբ-կայքի ստեղծում:

## Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

**Փուլ 1. Աշակերտների ձայնի և ընտրության իրավունք**

Ուսուցիչը սովորողներին ներկայացնում է նախագծի հիմնախնդիրը, հիմնահարցերը, բացատրում է , թե ինչ պետք է անեն այս նախագծի շրջանում: Ձևավորվում են խմբեր ըստ կարիքի և յուրաքանչյուրը ընտրում է իր դերը՝ ըստ նախասիրության:
Սովորողները որոշում են , ինչ վերջնարդյունք են ունենալու նախագծի ավարտին , ինչ ձևաչափով են ներկայանալու լսարանին: Վերնարդյունքը լինելու է մակետ՝ քարտեզի վրա բրածո մնացորդների տեղանքի նշումով, որը թվայնացվելու և տեղադրվելու է կայք էջում:

**Փուլ 2. Հետազոտություն**

Սովորողները խմբերում որոշում են ինչ հետազոտություն են իրականացնելու: Հարցազրույցներ համայնքում, այցելություններ այլ համայնքներ, թանգարաններ: Ուսուցչի ուղղորդմամբ նաև Հավաքագրում են այն աղբյուրները, որոնցից պետք է օգտվեն, գրականության ցանկ:

**Փուլ 3. Քննարկում, հետադարձ կապ**

Այս փուլում արդեն հավաքագրված տեղեկատվության քննարկում է իրականացվում: Հանդիպում ուսուցչի հետ (կարելի է օնլայն հարթակում ևս հանդիպել) , նրան են ներկայացնում հավաքագրված տեղեկատվությունը և ստանում հետադարձ կապ:

**Փուլ 4. Վերանայում**

Սովորողները, խմբերը մեկ անգամ ևս վերանայում են իրենց աշխատանքները ուսուցչի տված հետադարձ կապից հետո: Հստակեցնում հավաքագրված նյութերը, հավաստիությունն ու հուսալիությունը:

**Փուլ 5. Գործնական փուլ**

Այս փուլում աշխատում են մակետի պատրաստմամբ Արմաթ լաբորատորիայում:

**Փուլ 6. Հանրային ներկայացում**

Սովորողները ունեն հնարավորություն 30ր ներկայացնելու իրենց նախագծի բովանդակությունը և հետաքրքիր ձևաչափով արդեն պատրաստի պրոդուկտը՝ ստեղծագործաբար ներկայացնելու համար:

| Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում |
|---|
| ☐ X Սովորել սովորելու կարողունակություն<br>☐ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն<br>☐ Տնտեսական կարողունակություն<br>☐ Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն<br>☐ X Լեզվական գրագիտություն և կարողունակություն<br>☐ X Մշակութային կարողունակություն<br>☐ X Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն<br>☐ X Թվային և մեդիա կարողունակություն |
| **Հետազոտության հիմնախնդիրը (մարտահրավերային հարցը)** |
| Ձևակերպել այն հիմնախնդիրը կամ մարտահրավերային հարցը, որի շուրջ պետք է կատարվի նախագծի հետազոտությունը:<br><br>Ինչպիսի՞ պատմական ժառանգություն են թողել երկրաբանական գործընթացները Շիրակ աշխարհի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի զարգացման վրա: |
| **Հիմնական հարցեր** |
| Հետազոտությունն իրականացնելիս ի՞նչ հարցերի պատասխաններ պետք է գտնեն աշակերտները:<br><br>1.Ինչպիսի՞ երկրաբանական զարգացում է ապրել Շիրակ աշխարհը<br>2. Ի՞նչ բրածո մնացորդներ են հայտնաբերվել Շիրակում<br>3. Ի՞նչ կենցաղային իրեր են հայտանաբերվել<br>4. Պատմական ինչպիսի՞ առանձնահատկություններ ունեն հայտնաբերված կենցաղային իրերը<br>5. Ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել բրածո մնացորդները բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման վրա<br>6. Մշակութային ի՞նչ ժառանգություն են ներկայացնում հայտանբերված իրերը և բրածո մնացորդները<br>7. Որքանո՞վ է բնակչությունն իրազեկված (ճանաչելի) կենցաղային իրերի և բրածո մնացորդների հայտանբերման պատմությանը:<br>8. Ինչպես իրազեկել բնակչությանը Շիրակի երկրաբանական առանձնահատկությունների մասին:<br>9☐ Արդյոք գիտեն , որ տեղանքում են հայտնաբերվել այդ իրերը: |

## Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

Հանգամանալից ներկայացնել հետազոտության քայլերը՝ առաջնորդվելով ՆՈՒ Ոսկե չափանիշով:

1 Աշխատանքային խմբերի ձևավորում
2 Հետազոտությունների, հարցազրույցների, ուսումնասիրության և այլ ձևերի վարման գործընթացի նկարագրություն
3 Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություն
- Խումբ 1՝ ուսումնասիրել մեդիա աղբյուրներ, մեդիագրականություն, մուլտիմեդիոն նյութեր
- Խումբ 2՝ Հարցազրույցների վարում(Յ ան դ ի պո ւ մ  հ ամ այ ն ք ի  բ ն ակ ի չ ն ե ր ի  հ ե տ, հ ն է աբ ան ի  հ ե տ, թ ան գ ար ան ի  տն օ ր ե ն ի  հ ե տ: )
- Թիմային՝ այցելություն թանգարաններ (Երևանի երկրաբանական թանգարան, Գյումրու երկրագիտական թանգարան, պատմության թանգարան)

4 Ընթացիկ աշխատանքների միջանկյալ քննարկում
5 Խումբ 3՝ «Արմաթ» լաբորատորիայում մակետների նախատիպերի ստեղծում
6 Թիմային՝ «Արմաթ» լաբորատորիայում նախատիպերի հիմա վրա ստեղծել մակետ
7 Թիմային՝ մակետի հիման վրա ստեղծել վիրտուալ թանգարան
8

## Միջառարկայական կապեր

| | | |
|---|---|---|
| ☐ հայոց լեզու | ☐ քիմիա | ☐ X աշխարհագրություն |
| ☐ հայ գրականություն | ☐ X հայոց պատմություն | ☐ երաժշտություն |
| ☐ օտար լեզուներ | ☐ կենսաբանություն | ☐ կերպարվեստ |
| ☐ մաթեմատիկա | ☐ բնագիտություն | ☐ ինֆորմատիկա |
| ☐ հասարակագիտություն | ☐ ֆիզիկա | ☐ պար |
| ☐ համաշխարհային պատմություն | ☐ մարմնակրթություն | ☐ բեմարվեստ |

## Տարիքային խումբ

| | | | |
|---|---|---|---|
| ☐ Կրտսեր դպրոց | ☐ X միջին դպրոց | ☐ ավագ դպրոց | ☐ խառը |

## Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

| | |
|---|---|
| ☐ Ամսագիր կամ թերթ,պաստառ | ☐ X Վեբ-կայք |
| ☐ Տեսանյութ | ☐ Սահիկաշար |
| ☐ Տեղեկատվական թերթիկ | ☐ Կոմիքս |
| ☐ Ձայնվածք (փոդքասթ) | ☐ Գրքի նկարազարդում |

| ☐ X Մակետ | ☐ X Վիրտուալ թանգարան |
|---|---|

## Հետազոտության աղբյուրներ

Անհրաժեշտության դեպքում ուսուցիչը տրամադրում է կա ՛մ ամբողջական, կա ՛մ մասնակի աղբյուրներ:

1☐Մեդիա աղբյուրներ
2☐Թեմատիկ գրականություն(Շ ի ր ակ ի ե ր կ ր աբ ան ակ ան առ ան ձ ն ահ ատկ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը . ե ր կ ր աբ ան ակ ան դ ար աշ ր ջ ան ն ե ր գ ր ք ե ր )
3☐Թանգարաններ
4☐Հարցազրույցներ
5☐Համայնքային այցելություններ

## Գնահատում

Ներկայացնել ամփոփիչ գնահատման բաղադրիչները:
Անհատական և խմբային գնահատում (ռուբրիկներ , ինքնագնահատման և փոխադարձ գնահատում)
Գնահ ատում իրականացնել աշխատանքների ամբողջ ընթացքում՝ ձևավորող գնահատում:
Գնահատել սովորողների առանձին աշխատանքները և նախագիծը որպես մեկ ընդհանուր աշխատանք:(Գ ն ահ ատմ ան ս ան դ ղ ակ ը ս տո ր և )

| | Շաբաթ I | Շաբաթ II=III | Շաբաթ IV | | Շաբաթ V | Շաբաթ VI | Շաբաթ VIII |
|---|---|---|---|---|---|---|---|
| Թեմայի ընտրություն<br>Հիմնախնդրի ձևակերպում<br>Հիմնական հարցերի կազմում | Յ ո կ տե մ բ ե ր ի 16-20 | | | | | | |
| Աղբյուրների ընտրություն<br>Հետազոտություն<br>Հարցազրույցների վարում,<br>Թանգարանների այցելություն | | Յ ո կ տե մ բ ե ր ի 30-ի ց ն ո յ ե մ բ ե ր ի 10 | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ձևավորող գնահատման փուլ1<br>Թիմային քննարկումներ դասարանում | | | Ն ո յ ե մ<br>բ ե ր ի<br>13-17 | | | | |
| Անդրադարձ-վերանայում | | | | | Ն ո յ ե մ բ<br>ե ր ի 20-24 | | |
| Տվյալների մշակում<br>Գործնական աշխատանք | | | | | | Ն ո յ ե մ<br>բ ե ր ի<br>27-ի ց<br>դ ե կ տե<br>մ բ ե ր ի<br>1 | |
| Հանրային ներկայացում | | | | | | | Դ ե կ տե մ բ<br>ե ր ի 1 |

## ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

| Միավոր | 2 միավոր | 1.5 միավոր | 1 միավոր | 0,5 միավոր |
|---|---|---|---|---|
| Ցուցիչ | Նախապատրաստական փուլ (թեմայի ընտրություն, նպատակի սահմանում, դերերի բաշխում՝ *եթե խմբային է)* | | | |
| *Ընթացքը*<br>(6 միավոր) | • Թեմայի ընտրության հարցում ցուցաբերել է նախաձեռնողականություն,թեման ընտրվել է ինքնուրույն:<br>• Սահմանված նպատակը և դրանից բխող խնդիրները հստակ են, չափելի, իրագործելի, ժամանակի բաշխումը՝ իրատեսական:<br>• Դերերի բաշխումն իրականացվել է լիարժեք. հաշվի են առնվել յուրաքանչյուրի հետաքրքրություններն ու կարողությունները: Սովորողը լիարժեք ընկալել է իր դերն ու առաջադրանքը[1]: | • Թեմայի ընտրության հարցում դրսևորվել է ակտիվ մասնակցություն:<br>• Սահմանված նպատակը հստակ է, չափելի, իրագործելի:<br>• Դերերի բաշխումը հիմնականում իրականացվել է՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի հետաքրքրություններն ու կարողությունները: Սովորողը ընկալել է իր դերն ու առաջադրանքը: | • Թեմայի ընտրության հարցում դրսևորվել է որոշակի մասնակցություն:<br>• Նպատակը սահմանված է:<br>• Դերերի բաշխումը իրականացվել է մասամբ համապատասխան. ոչ բոլորի հետաքրքրություններն ու կարողություններն են հաշվի առնվել: Սովորողը մասամբ է հասկացել իր դերն ու առաջադրանքը: | • Թեմայի ընտրության հարցում դրսևորել է պասիվ համաձայնություն:<br>• Նպատակը փոքր ինչ անհստակ է ձևակերպված:<br>• Դերերի բաշխումը քիչ անորոշ է. սովորողը գրեթե պատկերացրել է իր դերն ու առաջադրանքը: |
| | 3 միավոր | 2 միավոր | 1 միավոր | 0.5 միավոր |
| | Բուն ընթացք<br>(խնդիրների ձևակերպում, հարցերի մշակում, պլանի կազմում, ժամանակի բաշխում, աղբյուրների ուսումնասիրում, տեղեկության հավաքագրում և վերլուծություն, ինքնուրույնություն, համագործակցություն՝ *եթե խմբային է)* | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • Խնդիրների ձևակերպումը, հարցերի մշակումը, պլանի կազմումը, ժամանակի բաշխումը, աղբյուրների ուսումնասիրումը, տեղեկատվության հավաքագրումը իրականացված են ամբողջությամբ։<br>• Սովորողը դրսևորում է լիարժեք ինքնուրույնություն։<br>• Սովորողները դրևորում են համագործակցության բարձր մակարդակ՝ խմբում հաջողության հասնելու համար։ | • Խնդիրների ձևակերպումը, հարցերի մշակումը, պլանը առկա են։ Ժամանակի բաշխումն ու աղբյուրների ուսումնասիրումը, տեղեկատվության հավաքագրումը հիմնականում իրականացված են ոչ էական թերություններով։<br>• Սովորողը հիմնականում աշխատում է ինքնուրույն։<br>• Սովորողները դրևորում են համագործակցություն՝ խմբում հաջողության հասնելու համար։ | • Խնդիրների ձևակերպումը, պլանը, ժամանակի բաշխումը, աղբյուրների ուսումնասիրումը և տեղեկատվության հավաքագրումը մասամբ են իրականացված, կան էական թերություններ։<br>• Սովորողն աշխատանքի ընթացքում հաճախ է դիմում օգնության։<br>• Սովորողները ոչ միշտ են համաձայնեցնում իրենց գործողությունները։ | • Խնդիրների ձևակերպումը, պլանը, ժամանակի բաշխումը ներկայացված են թերի, աղբյուրների ուսումնասիրումը և տեղեկատվության հավաքագրումն իրականացված են որոշակի մասով։<br>• Սովորողը մշտապես օգնության կարիք ունի։<br>• Սովորողները դրսևորում են համագործակցության թույլ տարրեր։ |
| | 1 միավոր | 0.75 միավոր | 0.5 միավոր | 0.25 միավոր |
| | Ավարտ կամ ամփոփում<br>(վերջնական մշակում, աշխատանքի ձևավորում) | | | |
| | Աշխատանքը մշակված և ձևավորված է անթերի։ | Աշխատանքը մշակված և ձևավորված է պատշաճ մակարդակով՝ ոչ էական թերություններով։ | Աշխատանքի մշակումը և ձևավորումը կատարված է էական թերություններով։ | Աշխատանքի մշակումը և ձևավորումը որոշակի մասով կատարված են։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| …վանդա- …ությունը …միավոր) | Համապատասխանությունը թեմային, ամբողջականությունը, գիտական հիմնավորվածությունը, գրագիտությունը | | | |
| | 3 միավոր | 2 միավոր | 1 միավոր | 0,5 միավոր |
| | Բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է թեմային: | Բովանդակությունը համապատասխանում է թեմային, կան ոչ էական թերություններ: | Բովանդակությունը մասամբ համապատասխանում է թեմային: | Բովանդակություն ը որոշակի մասով համապատասխա նում է թեմային: |
| | 2 միավոր | 1,5 միավոր | 1 միավոր | 0.5 միավոր |
| | Աշխատանքը ամբողջա կան է, կան խորքային վերլուծություններ, պահպանված են տրամաբանական կապերը, թեման լիովին բացահայտված է: | Աշխատանքը ամբողջակա ն է, կան վերլուծություններ, պահպանված են տրամաբանական կապերը, թեման բացահայտված է: Առկա են ոչ էական թերություններ: | Աշխատանքի ամբողջա կանությունը մասամբ է պահպանված, կան էական թերություններ: | Թեմայի գլխավոր միտքը թույլ է արտահայտված, բովանդակություն ը ներկայացված է կցկտուր: |
| | 2 միավոր | 1,5 միավոր | 1 միավոր | 0.5 միավոր |
| | Աշխատանքը գիտականորեն հիմնավորված է: | Առկա է գիտական հիմնավորվածություն, կան ոչ էական թերություններ: | Գիտական հիմնավոր-վածությունը պահպանված է էական թերություններով: | Գիտական հիմնավորվածությ ունն արտահայտված է որոշակի չափով: |
| | 1 միավոր | 0,75 միավոր | 0,5 միավոր | 0,25 միավոր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Խմբագրման և սրբագրման կարիք չունի, ամբողջությամբ պահպանված են սահմանված տեխնիկական պահանջները: | Ունի մասնակի խմբագրման կարիք. պահպանված են սահմանված տեխնիկական պահանջները: | Ունի էական խմբագրման և սրբագրման կարիք. պահպանված է սահմանված տեխնիկական պահանջների մի մասը: | Պահպանված է սահմանված տեխնիկական պահանջների որոշակի մասը: |
| *Ներկայա-ցումը* (6 միավոր) | Ձևը/միջոցը (սահիկաշար, ֆիլմ/հոլովակ, երաժշտություն, համերգ, նկար, պաստառ, գրքույկ, մակետ, բեմականացում և այլն), խոսքը, համագործակցությունը/ինքնուրույնությունը | | | |
| | 3 միավոր | 2 միավոր | 1 միավոր | 0,5 միավոր |
| | Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը: | Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն արտացոլում է թեմայի բովանդակությունը ոչ էական թերություններով: | Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցն արտացոլում է թեմայի բովանդակությունը էական թերություններով: | Աշխատանքի ներկայացման ձևը/միջոցը որոշակի մասով արտացոլում է թեմայի բովանդակությունը |
| | 3 միավոր | 2 միավոր | 1 միավոր | 0,5 միավոր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | • Խոսքը գրագետ է, պահպանված են տրամաբանական կապերը, ամբողջովին հասկանալի են ձևակերպումներն ու հիմնավորումները:<br>• Առկա է լիարժեք թիմային աշխատանք (եթե խմբային է): | • Խոսքը գրագետ է, պահպանված են տրամաբանական կապերը, հասկանալի են ձևակերպումներն ու հիմնավորումները, սակայն կան ոչ էական թերություններ:<br>• Առկա է առողջ համագործակցություն, առկա են ոչ էական թերություններ (եթե խմբային է) | • Խոսքը հասկանալի է, սակայն ձևակերպումներում և հիմնավորումներում կան էական թերություններ:<br>• Համագործակցությունը դրսևորվում է էական թերություններով: | • Խոսքը որոշակի չափով համապատասխանում է բովանդակությանը, ներկայացվում է կցկտուր:<br>• Համագործակցությունը դրսևորվում է որոշակի չափով: |